*Աշխատանքային տարբերակ*

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

# «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ/ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ/ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով կարգավորվում են «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման և ուսուցման հետ կապված գործընթացները:

1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը, Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա և հայցորդություն) կրեդիտային համակարգի ներդրման մասին, Կրթության մասին, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքները, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը, ՀՀ կառավարության 26.04.2007թ.-ի N 581-Ն որոշումը, ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը, ՀՀ կառավարության 23.04.2020թ.-ի N611-Ն որոշումը, ՀՀ կառավարության 03.02.2022թ.-ի N123-Ն որոշումը, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական փաստաթղթեր:

1.3. Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որը ներկայացվում է գիտական աստիճանի հայցման համար, կարող է գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում և/կամ կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական կամ տեխնոլոգիական մշակում:

1.4. Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորում) կրթություն ունեցող, հետբուհական կրթական ծրագրով ուսումնառությունն ասպիրանտուրայում շարունակող և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ է, ով հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ատեստավորման արդյունքում կարող է ստանալ հետազոտողի որակավորման աստիճան:

1.5. Հայցորդը բարձրագույն մասնագիտական (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորում) կրթություն ունեցող, առանց ասպիրանտուրայում սովորելու գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով

ատենախոսություն պատրաստող անձ է, ով սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը:

## 2. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ Համալսարանը Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) համակարգմամբ ըստ պահանջի ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության հայտերը՝ ամբիոններից ստացած համապատասխան հիմնավորումների հիման վրա:

2.2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ Նախարարությունը հաստատություններից ստացած հայտերի հիման վրա, սահմանված կարգով, ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրա ընդունելության տեղերը և առկա/հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա ընդունելության տեղերի բաշխումը:

2.3. Ասպիրանտուրայի ընդունելությունը՝ առկա և հեռակա ուսուցմամբ, պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար) իրականացվում է տվյալ տարվա ժամանակահատվածի զորակոչը կազմակերպելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում:

2.4. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (այսուհետ՝ վճարովի) տեղերի համար ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է Նախարարության կողմից սահանված ժամկետներում:

2.5. Համալսարանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների՝ ասպիրանտուրա ընդունելության տեղերը և դրանց բաշխումը հաստատելու մասին համապատասխան որոշումը, պաշտոնական կայքում և/կամ մամուլում տալիս է հայտարարություն ասպիրանտուրայի ընդունելության (համապատասխան մասնագիտություններով տեղերի, անհրաժեշտ փաստաթղթերի և վերջիններիս ընդունման ժամանակահատվածի) վերաբերյալ:

2.6. Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցողները:

2.7. Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից 2.5 կետում նշված հայտարարության մեջ սահմանված ժամկետում Կենտրոն է ներկայացվում Համալսարանի ռեկտորի անունով դիմում (Հավելված 1)՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

- 2.7.1. անձնագրի և սոցիալական քարտի բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները վերադարձվում են դիմումը լրացնելուց հետո),
- 2.7.2. ինքնակենսագրություն,
- 2.7.3. 3 լուսանկար՝ 3x4 չափի,
- 2.7.4. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների ու դրանց հավելվածների բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են

վերադարձվում դիմումը լրացնելուց հետո), (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2.7.5. Օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն) ատեստավորման վկայական կամ դրան համապատասխան տեղեկանք (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

2.7.6. ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն 1 գիտական աշխատանքի պատճեն կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի (A4 ձևաչափի) սահմաններում:

2.7.7. գիտական ղեկավարի գրավոր համաձայնություն ղեկավարման վերաբերյալ (առկայության դեպքում) (Հավելված 2),

2.7.8. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2.8. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

- անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,
- ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիԷՖ)՝ 200 միավորը,
- գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Այն դիմորդները, որոնց համար մասնագիտական առարկաներ են անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը, քննություն են հանձնում այլ օտար լեզվից:

2.9. Ասպիրանտուրայի ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետի (կետ 2.5) ավարտից հետո ներկայացված ռեֆերատները (կետ 2.7.6) Կենտրոնի կողմից տրամադրվում են թողարկող ամբիոններ՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանց վերաբերյալ գրավոր կարծիք (դրական կամ բացասական) ստանալու նպատակով:

2.10. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Համալսարանի ռեկտորը՝ որպես հանձնաժողովի նախագահ, Կենտրոնի տնօրենը՝ որպես հանձնաժողովի նախագահի տեղակալ, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենը, Կենտրոնի հետբուհական կրթության համակարգողը, թողարկող ամբիոն(ներ)ի վարիչ(ներ)ը՝ որպես անդամներ: Ընդունող հանձնաժողովի անցկացրած նիստը իրավազոր է, եթե մասնակցում է հանձնաժողովի կազմի առնվազն 2/3-ը: Նիստի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք: Նիստն արձանագրվում է:

2.11. Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվություն տալիս է Համալսարանի ընդունող հանձնաժողովը վերջինիս նախագահի հրավիրած նիստի ընթացքում՝ օտար լեզվից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի և/կամ տեղեկանքի առկայության դեպքում (կետեր 2.7.5 և 2.8), ընդունելության մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին թողարկող ամբիոնի գրավոր դրական գրախոսականի (կետ 2.9) կամ ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն 1 գիտական աշխատանքի պատճենի առկայության դեպքում, ինչպես նաև ընդունելության համար պահանջվող այլ փաստաթղթերի (կետ 2.7) առկայության ստուգումն իրականացնելուց հետո: Նույն նիստի ընթացքում, ելնելով մասնագիտության առանձնահատկությունից, ընդունող հանձնաժողովը սահմանում է

յուրաքանչյուր մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր):

2.12. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է մասնագիտական քննական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են թողարկող ամբիոնի վարիչը՝ որպես Հանձնաժողովի նախագահ, ինչպես նաև նշանակվում են տվյալ բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող 2-4 մասնագետ՝ որպես անդամներ:

2.13. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է Համալսարանի ռեկտորը և տեղեկացնում է Նախարարությանը:

2.14. Համալսարանի հայտարարությունների համար նախատեսված վայրում Կենտրոնի կողմից փակցվում և/կամ պաշտոնական կայքում տեղադրվում են մասնագիտական քննության.

2.14.1. անցկացման տեղի, օրվա, ժամի և ձևի վերաբերյալ տեղեկատվությունը՝ քննությունից 7 աշխատանքային օր առաջ,

2.14.2. հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն 1 ամիս առաջ,

2.14.3. ընթացակարգային պահանջները՝ սահմանված սույն կանոնակարգով:

2.15. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ կրթական աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է Համալսարանի թողարկող ամբիոնի և հաստատվում ռեկտորի կողմից:

2.16. Մասնագիտական քննությունից 2 աշխատանքային օր առաջ հրապարակված հարցաշարից Հանձնաժողովի նախագահի կողմից կազմվում են հարցատոմսեր, որոնք հաստատվում են վերջինիս ստորագրությամբ և ներկայացվում Կենտրոն: Մասնագիտական քննությունից 1 աշխատանքային օր առաջ Կենտրոնի տնօրենը կազմված հարցատոմսերը ներկայացնում է ռեկտորին՝ Համալսարանի կնիքով վավերացնելու նպատակով: Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են:

2.17. Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

2.18. Բանավոր քննությունը ձայնագրվում է, և ձայնագրությունը պահպանվում է արդյունքների հրապարակումից հետո առնվազն 24 ժամ: Գրավոր քննության աշխատանքները պահվում են դիմորդի անձնական գործում:

2.19. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13 միավոր: Գիտելիքների գնահատման մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի բաց նիստում՝ Հանձնաժողովի կազմի 2/3-ից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում՝ յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի հիման վրա: Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Համալսարանի ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող Հանձնաժողովի կազմից: Նախագահի կամ փոխարինողի ներկայությունը պարտադիր է: Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:

2.20. Մասնագիտական քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգը հետևյալն է.

2.20.1. Դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել Հանձնաժողովին՝ արդյունքների հրապարակումից հետո 1 ժամվա ընթացքում՝ Հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր դիմում-բողոք, որը

քննարկվում է նույն օրը:

2.20.2. Բողոքարկմանը մասնակցում են տվյալ Հանձնաժողովի անդամ չհանդիսացող Համալսարանի վարչական անձնակազմի աշխատակիցը (դեկան, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի ներկայացուցիչ կամ այլ), Ուսանողական գիտական ընկերության կամ Ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են Համալսարանի ռեկտորի կողմից: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը նույն Հանձնաժողովի նախագահն է:

2.20.3. Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում՝ լսվում և քննարկվում է ձայնագրությունը:

2.20.4. Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, Հանձնաժողովի փակ նիստում նախագահի, անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

- գնահատականը թողնել անփոփոխ,
- գնահատականը բարձրացնել:

2.20.5. Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի, Համալսարանի վարչական անձնակազմի, Ուսանողական գիտական ընկերության կամ Ուսանողական խորհրդի ներկայացուցչի և դիմորդի կողմից:

2.20.6. Նշված անձանցից որևէ մեկի՝ ընդունված որոշման վերաբերյալ անհամաձայնության դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

2.20.7. Գնահատականի փոփոխման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:

2.20.8. Մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

2.21. Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա՝ Համալսարանի ասպիրանտուրայի ընդունելության մրցույթի (կետեր 2.23-2.26) համար:

2.22. Մրցույթի արդյունքում ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:

2.23. Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝

2.23.1. մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ընդհանուր միջին որակական գնահատականը,

2.23.2. բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականների միջին թվաբանականը,

2.23.3. հրատարակված գիտական աշխատանքների թիվը (կետ 2.7.7.),

2.23.4. միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):

2.24. Ընդունող հանձնաժողովը վերջինիս նախագահի հրավիրած նիստի ընթացքում մրցույթի

արդյունքների հիման վրա յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ ընդունում է համապատասխան որոշում:

2.25. Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն էլեկտրոնային նամակով իրազեկվում են Կենտրոնի կողմից մասնագիտական քննությունից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

2.26. Ասպիրանտի հրամանագրումը (վճարովի հիմունքով ընդունված ասպիրանտի դեպքում՝ կցագրումը, այնուհետև հրամանագրումը) կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր (Հավելված 3):

2.27. Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից. հայագիտական ուղղվածությամբ մասնագիտություններով՝ 65.000 ՀՀ դրամ, բնագիտական և այլ մասնագիտություններով՝ 60.000 ՀՀ դրամ, տնտեսագիտական և իրավաբանական մասնագիտություններով՝ 55.000 ՀՀ դրամ:

## 3. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Հայցորդ կարող են ձևակերպվել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձինք:

3.2. Հայցորդության ձևակերպումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

3.3. Կենտրոնի համակարգմամբ Համալսարանի պաշտոնական կայքում տրվում է հայտարարություն հայցորդության ձևակերպման (համապատասխան մասնագիտությունների, անհրաժեշտ փաստաթղթերի և վերջիններիս ընդունման ժամանակահատվածի) վերաբերյալ:

3.4. Հայցորդության ձևակերպման համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից 3.3 կետում նշված հայտարարության մեջ սահմանված ժամկետում Կենտրոն է ներկայացվում Համալսարանի ռեկտորի անունով դիմում (Հավելված 1)՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

- 3.4.1. անձնագրի և սոցիալական քարտի բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո),
- 3.4.2. ինքնակենսագրություն,
- 3.4.3. 3 լուսանկար՝ 3x4 չափի,
- 3.4.4. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների ու դրանց հավելվածների բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո), (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
- 3.4.5. ընտրված մասնագիտությամբ հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը և այդ աշխատանքների պատճենները կամ առնվազն 20 տպագրական էջի (A4 ձևաչափի) սահմաններում գիտական ռեֆերատ,
- 3.4.6. գիտական ղեկավարի գրավոր համաձայնություն գիտական ղեկավարման վերաբերյալ (առկայության դեպքում) (Հավելված 2),
- 3.4.7. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

3.5. Հայցորդության ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման

ժամկետի (կետ 3.3) ավարտից հետո ներկայացված ռեֆերատները (կետ 3.4.5) Կենտրոնի կողմից տրամադրվում են թողարկող ամբիոններ՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում դրանց վերաբերյալ գրավոր կարծիք (դրական կամ բացասական) ստանալու նպատակով:

3.6. Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հայցորդության համակարգ ձևակերպումը կազմակերպելու համար Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Համալսարանի ռեկտորը՝ որպես հանձնաժողովի նախագահ, Կենտրոնի տնօրենը՝ որպես հանձնաժողովի նախագահի տեղակալ, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենը, Կենտրոնի հետբուհական կրթության համակարգողը, թողարկող ամբիոն(ներ)ի վարիչ(ներ)ը՝ որպես անդամներ: Ընդունող հանձնաժողովի անցկացրած նիստը իրավազոր է, եթե մասնակցում է հանձնաժողովի կազմի առնվազն 2/3-ը: Նիստի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք: Նիստն արձանագրվում է:

3.7. Ընդունող հանձնաժողովը հայցորդության ձևակերպումը իրականացնում է ընտրված մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին թողարկող ամբիոնի գրավոր դրական գրախոսականի (կետ 3.5) կամ ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն 1 գիտական աշխատանքի պատճենի առկայության դեպքում, ինչպես նաև ձևակերպման համար պահանջվող այլ փաստաթղթերի (կետ 3.4) առկայության ստուգումն իրականացնելուց հետո:

3.8. Ընդունող հանձնաժողովի՝ դիմորդին որպես հայցորդ ձևակերպելու վերաբերյալ դրական որոշման դեպքում վերջինիս կցագրումը, այնուհետև հրամանագրումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ հայցորդի հետ կնքելով համապատասխան պայմանագիր (Հավելված 4):

## 4. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ/ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

4.1. Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3 տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարին:

4.2. Հայցորդության համակարգում ուսուցումն իրականացվում է վճարովի հիմունքով: Ուսուցման տևողությունը չի գերազանցում 5 տարին:

4.3. Ասպիրանտուրայում/հայցորդության համակարգում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտի և բաղկացած է 2 փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական: 50 կրեդիտը հատկացվում է կրթական, իսկ 130 կրեդիտը՝ հետազոտական բաղադրիչին (Հավելված 5):

4.4. Ասպիրանտուրայում/հայցորդության համակարգում ուսումնական գործընթացը յուրաքանչյուր ուսումնական տարում Կենտրոնի կողմից կազմակերպվում է աշնանային և գարնանային շրջաններով՝ հետևյալ ժամանակահատվածներում՝

- Աշնանային շրջան – նոյեմբեր-դեկտեմբեր,
- Գարնանային շրջան – մարտ-ապրիլ:

4.5. Իրականացված դասընթացների ամփոփիչ ստուգումները և լուծարքները կազմակերպվում են Կենտրոնի կողմից՝ ըստ հետևյալ ժամանակացույցի.

Աշնանային շրջան

- Ամփոփիչ ստուգումներ – հունվարի 8-ից 30-ը
- I լուծարքային շրջան – փետրվարի 5-ից 15-ը
- II լուծարքային շրջան – փետրվարի 20-ից 28-ը

Գարնանային շրջան

- Ամփոփիչ ստուգումներ – հունիսի 1-ից 20-ը
- I լուծարքային շրջան – հունիսի 21-ից 30-ը
- II լուծարքային շրջան – հուլիսի 1-ից 10-ը

4.6. Ամփոփիչ ստուգումների գնահատման գործընթացն իրականացվում է՝ ըստ Համալսարանում ասպիրանտի/հայցորդի գիտելիքների գնահատման սանդղակի (Հավելված 6):

4.7. Բազմագործոնային (վերջնական) գնահատականը ձևավորվում է 2 գործոնների հիման վրա՝ համապատասխան կշիռներով. անհատական աշխատանք՝ 20%, ամփոփիչ ստուգում՝ 80%: Ամփոփիչ ստուգումների, անհատական աշխատանքների, ինչպես նաև պրակտիկաների գնահատականները Կենտրոնի հետբուհական կրթության համակարգողի կողմից մուտքագրվում են Համալսարանի ուսանողների էլեկտրոնային բազա, որտեղ ձևավորվում են բազմագործոնային (վերջնական) գնահատականները:

4.8. Կրթական բաղադրիչի ոչ մասնագիտական դասընթացների անցումային շեմ համարվում է 61 միավորը, իսկ մասնագիտական դասընթացներինը՝ 75 միավորը:

4.9. Կցագրումից հետո՝ մինչև որպես ասպիրանտ/հայցորդ հրամանագրվելը, անձը տասնօրյա ժամկետում պարտավոր է վճարել առնվազն 1 ամսվա վարձավճարը՝ ուսման վարձը հավասարաչափ բաժանելով տվյալ ուսումնական տարվա ամիսների թվին (10 ամիս), որով կսահմանվի ամսական վճարի նվազագույն չափը:

4.10. Որպես ասպիրանտ/հայցորդ հրամանագրվելուց և Համալսարանի հետ պայմանագիր կնքելուց հետո եռամսյա ժամկետում անձը պետք է Կենտրոն ներկայացնի.

4.10.1. գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ քաղվածք՝ Նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե (այսուհետ՝ ԲԿԳԿ) կողմից թույլատրված հաստատության կողմից,

4.10.2. Գիտական ղեկավարի, ասպիրանտի/հայցորդի և թողարկող ամբիոնի կողմից Կենտրոնի համակարգմամբ մշակված ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքների անհատական պլաններ (Հավելվածներ 7,8), որոնց նախնական էլեկտրոնային տարբերակները ստուգման նպատակով պետք է ներկայացվեն որպես ասպիրանտ/հայցորդ հրամանագրվելուց և Համալսարանի հետ պայմանագիր կնքելուց հետո երկամսյա ժամկետում: Պլանների վերջնական տարբերակները Կենտրոնի ներկայացմամբ հաստատվում են համապատասխանաբար Գիտական խորհրդի և թողարկող ամբիոնի կողմից:

4.11. Եթե Համալսարանը տվյալ մասնագիտությամբ գիտական ղեկավար և ատենախոսության թեմա հաստատելու թույլտվություն ունի, ապա ասպիրանտը/հայցորդը, ներկայացնելով գիտական ղեկավարի գրավոր համաձայնությունը գիտական ղեկավարման վերաբերյալ (Հավելված 2), Կենտրոնի միջնորդությամբ դիմում է թողարկող ամբիոն՝ ամբիոնի նիստում գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հարցը քննարկելու, հաստատելու և Կենտրոն համապատասխան քաղվածք տրամադրելու նպատակով:

Թողարկող ամբիոնից տրված քաղվածքի հիման վրա Կենտրոնի տնօրենի կողմից հարցը ներկայացվում է Համալսարանի Գիտական խորհրդի քննարկմանը՝ գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման նպատակով: Տվյալ մասնագիտությամբ գիտական ղեկավար և ատենախոսության թեմա հաստատելու թույտվություն չունենալու դեպքում Համալսարանը, հիմք ընդունելով գիտական ղեկավարի գրավոր համաձայնությունը գիտական ղեկավարման վերաբերյալ (Հավելված 2), Կենտրոնի համակարգմամբ միջնորդագիր է տրամադրում ասպիրանտին/հայցորդին, որը վերջինիս կողմից ներկայացվում է համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտական կազմակերպություն՝ ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման գործընթացն այնտեղ կազմակերպելու նպատակով: Ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ որոշման մեջ նշվում են թեմայի անվանումը, գիտության բնագավառը և մասնագիտությունն՝ ըստ ՀՀ գիտական աստիճանաշնորհման անվանացանկի:

4.12. Ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատումից հետո Համալսարանի աշխատակից չհանդիսացող գիտական ղեկավարի և Համալսարանի միջև կնքվում է պայմանագիր (Հավելված 9):

4.13. Ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը հարկավոր է կազմել՝ յուրաքանչյուր տարվա համար նախատեսելով որոշակի կրեդիտ, մասնավորապես. 1-ին տարի՝ առնվազն 5 կրեդիտ, մնացած տարիներից յուրաքանչյուրում առնվազն 20 կրեդիտ:

4.14. Հետազոտական աշխատանքների անհատական պլանը կազմվում է յուրաքանչյուր տարվա համար՝ ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով հետազոտական բաղադրիչին տվյալ տարում հատկացված կրեդիտների շրջանակում՝ հաջորդականորեն պլանավորելով նախատեսվող աշխատանքները: Հետազոտական աշխատանքների անհատական պլանը հաստատվում է թողարկող ամբիոնի կողմից:

4.15. Հրամանագրվելուց հետո ուսումնառության ընթացքում ասպիրանտը/հայցորդը պարտավոր է ուսումնասիրել ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված դասընթացները՝ հանձնելով նախատեսված քննությունները, տպագրել անհրաժեշտ քանակությամբ հոդվածներ, ավարտուն տեսքի հասցնել ատենախոսությունը, համաձայն ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կարգի համապատասխան հաստատությունում հանձնել մասնագիտական որակավորման քննություն(ներ)ը (Համալսարանում ուսումնառող ասպիրանտ/հայցորդների համար Համալսարանում անցկացվող մասնագիտական որակավորման քննություններին մասնակցությունն իրականացվում է անվճար հիմունքով) և անցնել ատենախոսության նախնական քննարկում՝ կուտակելով համապատասխան կրեդիտները:

4.16. Համապատասխան շրջանի դասատախտակի կազմումը, տարածումը և դասընթացների վերահսկողությունն իրականացվում է Կենտրոնի կողմից:

4.17. Ասպիրանտը իր ուսումնառության յուրաքանչյուր ուսումնական տարում պետք է ունենա առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն:

4.18. Ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:

4.19. Եթե Համալսարանում հնարավոր չէ իրականացնել կրեդիտային համակարգի ներդրման արդյունքում ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված դասընթացները, ապա դրանց ուսուցումը պայմանագրային

հիմունքներով կարող է իրականացվել այլ հաստատությունում՝ Համալսարանի միջոցների հաշվին:

4.20. Գիտական հետազոտություններ կատարելիս ասպիրանտն/հայցորդն օգտվում է Համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների իրավունքից (ըստ Համալսարանում սահմանված կարգի), հանրակացարանից և այլն:

4.21. Առկա ուսուցմամբ ասպիրանտին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ՝ անվճար համակարգի դեպքում նաև կրթաթոշակի պահպանմամբ:

4.22. Համալսարանի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրատուրայի կրթական աստիճանի գերազանցության դիպլոմով ավարտած շրջանավարտ հանդիսացող ասպիրանտ/հայցորդների ուսման վարձի համար սահմանել զեղչ 10%-ի չափով, իսկ Համալսարանի ամրագրված գիտահետազոտական առաջնահերթությունների ուղղությամբ ուսումնառող ասպիրանտ/հայցորդների ուսման վարձի համար՝ 20%-ի չափով: Ուսման վարձի զեղչման համար նշված կետերից միանգամից մի քանիսն ունենալու դեպքում ասպիրանտը/հայցորդը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որով կիրառվում է զեղչի առավելագույն չափը:

4.23. Ասպիրանտը/հայցորդը, ըստ ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի, յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում Կենտրոն է ներկայացնում նախորդ ուսումնական տարվա վերաբերյալ հաշվետվություն (Հավելված 10), որը, ըստ հաստատված ժամանակացույցի, քննարկվում է թողարկող ամբիոնի՝ Կենտրոնի տնօրենի և հետբուհական կրթության համակարգողի մասնակցությամբ նիստի ընթացքում, ինչի արդյունքում որոշվում է նրա ատեստավորվելու/չատեստավորվելու կամ պայմանական ատեստավորվելու հարցը: Անհրաժեշտության դեպքում Գիտական խորհրդում պարբերաբար լսվում և քննարկվում են ասպիրանտների/հայցորդների ու նրանց գիտական ղեկավարների հաշվետվությունները:

4.24. Ասպիրանտը/հայցորդը թողարկող ամբիոնի կողմից չի ատեստավորվում ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով տվյալ ուսումնական տարում նախատեսված կրեդիտների 20%-ից ավելին չկուտակելու դեպքում: Այդ դեպքում իրականացվում է պայմանական ատեստավորում՝ սահմանելով 6 ամիսը չգերազանցող հստակ ժամկետ առկա թերությունները շտկելու համար: Ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված, սակայն չկուտակած կրեդիտները, որ չեն գերազանցում 20%-ի շեմը, գումարվում են ատեստավորում անցած ասպիրանտի/հայցորդի՝ հաջորդ տարվա համար նախատեսված կրեդիտներին: Այդ կրեդիտներից կրթական բաղադրիչին հատկացված կրեդիտների համար կատարվում է հավելյալ վճարում՝ ըստ 1 կրեդիտի համար սահմանված գումարի:

4.25. Պայմանական ատեստավորման դեպքում սահմանված ժամկետում (կետ 4.24) ասպիրանտը/հայցորդը Կենտրոն է ներկայացնում կրկնակի հաշվետվություն տրամադրված 6 ամիսների ընթացքում կատարված աշխատանքի վերաբերյալ, որը քննարկվում է թողարկող ամբիոնի՝ Կենտրոնի տնօրենի և հետբուհական կրթության համակարգողի մասնակցությամբ նիստի ընթացքում, որի արդյունքում.

- ատեստավորվում է, եթե չկուտակած կրեդիտները չեն գերազանցում պայմանականորեն ատեստավորված տարում ուսումնահետազոտական

աշխատանքների անհատական պլանով նախատեսված կրեդիտների 20%-ը,

- հեռացվում է՝ հակառակ դեպքում:

4.26. Ատեստավորում չանցած ասպիրանտի/հայցորդի՝ Համալսարանից հեռացման ռեկտորի հրամանը տրվում է թողարկող ամբիոնի նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ասպիրանտը/հայցորդը նախապես գրավոր տեղեկացվում է Կենտրոնի կողմից:

4.27. Ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով 3 կամ 4 տարի ուսումնառություն պլանավորած հայցորդի ուսումնառության ժամկետը մինչև 5 տարի երկարաձգելու և դեռևս չիրականացված հետազոտական աշխատանքների վերապլանավորում իրականացնելու նպատակով.

4.27.1. Հայցորդի և վերջինիս գիտական ղեկավարի կողմից համապատասխան հիմնավորումներ պարունակող դիմումը և ուսումնահետազոտական աշխատանքների անհատական ու հետազոտական աշխատանքների անհատական նոր պլանների նախնական տարբերակները տվյալ ուսումնական տարում նախատեսված հաշվետվությունից հետո հնգօրյա ժամկետում ներկայացվում են Կենտրոն:

4.27.2. Թողարկող ամբիոնի՝ Կենտրոնի տնօրենի մասնակցությամբ առաջիկա նիստում ներկայացվում է հարցը՝ քննարկելով ներկայացված ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքների անհատական նոր պլանների նախնական տարբերակները:

4.27.3. Թողարկող ամբիոնի նիստից հետո եռօրյա ժամկետում ստացված համապատասխան քաղվածքը Կենտրոնի տնօրենի կողմից ներկայացվում է առաջիկա Գիտական խորհրդի նիստում, որի դրական որոշման դեպքում հաստատվում են ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքների անհատական նոր պլանները:

4.27.4. Գիտական խորհրդի որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Կենտրոնի տնօրենի կողմից տրված հրամանի նախագծի հիման վրա Համալսարանի ռեկտորը տալիս է հայցորդի ուսումնառության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ հրաման:

4.28. Ուսումնառության ընթացքում գիտական ղեկավարի և/կամ ատենախոսության թեմայի մասնակի կամ լրիվ փոփոխություն իրականացնելու նպատակով.

4.28.1. Ասպիրանտի/հայցորդի և/կամ գիտական ղեկավարի կողմից համապատասխան հիմնավորումներ պարունակող դիմումը ներկայացվում է Կենտրոն:

4.28.2. Թողարկող ամբիոնի՝ Կենտրոնի տնօրենի մասնակցությամբ առաջիկա նիստում ներկայացվում և քննարկվում է հարցը: Ատենախոսության թեմայի լրիվ փոփոխության դեպքում ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի հետազոտական բաղադրիչից նախկինում կուտակած կրեդիտները հաշվի չեն առնվում, իսկ մասնակի փոփոխության դեպքում Կենտրոնի և թողարկող ամբիոնի կողմից կատարվում է նախկինում կուտակած կրեդիտների վերահաշվարկ՝ համապատասխան հիմնավորմամբ:

4.28.3. Թողարկող ամբիոնի նիստից հետո եռօրյա ժամկետում ստացված քաղվածքը Կենտրոնի տնօրենի կողմից ներկայացվում է առաջիկա Գիտական խորհրդի նիստում, որի դրական որոշման և տվյալ մասնագիտության ուղղությամբ

գիտական ղեկավար և ատենախոսության թեմա հաստատելու թույլտվություն ունենալու դեպքում հաստատվում են նոր գիտական ղեկավարը և/կամ ատենախոսության թեման: Տվյալ մասնագիտության ուղղությամբ գիտական ղեկավար և ատենախոսության թեմա հաստատելու թույլտվություն չունենալու դեպքում Համալսարանը Կենտրոնի համակարգմամբ միջնորդագիր է տրամադրում ասպիրանտին/հայցորդին, որը վերջինիս կողմից ներկայացվում է համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտական կազմակերպություն՝ եռամսյա ժամկետում հաստատման գործընթացն այնտեղ կազմակերպելու նպատակով:

4.28.4. Համալսարանի աշխատակից չհանդիսացող նոր գիտական ղեկավարի և Համալսարանի միջև կնքվում է պայմանագիր (Հավելված 9):

## 5. ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ/ԱԶԱՏՈՒՄԸ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

5.1. Համալսարանից ասպիրանտը/հայցորդը հեռացվում է.

5.1.1 Չատեստավորվելու դեպքում,

5.1.2 ՀՀ օրենսդրությամբ կամ Համալսարանի կանոնադրությամբ կամ ներքին կարգապահական կանոններով կամ սույն Կանոնակարգով կամ Համալսարանի և ասպիրանտի/հայցորդի միջև կնքված պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում,

5.1.3 Համալսարանի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում:

5.2. Համալսարանից ասպիրանտը/հայցորդը ազատվում է.

5.2.1 իր դիմումի համաձայն,

5.2.2 այլ հաստատություն տեղափոխվելու դեպքում:

5.3. Ասպիրանտի/հայցորդի ուսումնառությունը դադարեցվում է.

5.3.1 պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում,

5.3.2 հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում,

5.3.3 առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու դեպքում:

5.4. Համալսարանից ասպիրանտի/հայցորդի ազատման մասին հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման 5.1 կետով նախատեսված դեպքերի:

5.5. Վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից: Համալսարանից հեռացված կամ ազատված ասպիրանտը/հայցորդը կարող է վերականգնվել հեռացումից/ազատումից առնվազն 1 կիսամյակ հետո հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի համապատասխան կուրս վճարովի հիմունքով ուսումը շարունակելու համար:

5.6. Ուսումնառությունը դադարեցրած ասպիրանտը/հայցորդը վերականգնվում է մինչև ուսումնառության դադարեցումն ունեցած կարգավիճակի (վճարովի/անվճար) և ուսման վարձավճարի չափի պահպանմամբ: Հեռացված/ազատված ասպիրանտը/հայցորդը վերականգնվում է այն կիսամյակում, որից ուսումնառությունն ընդհատվել է, եթե

վերականգնման պահին պարտքերը չեն գերազանցում 20 կրեդիտը: Հակառակ դեպքում ասպիրանտին/հայցորդին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր այն կիսամյակից, որից ուսումնառության շարունակման դեպքում վերոնշյալ պահանջը բավարարվում է:

5.7. Վերականգնվելու նպատակով.

5.7.1 հեռացված/ազատված/ուսումնառությունը դադարեցրած հայցորդի/ասպիրանտի կողմից համապատասխան հիմնավորումներ պարունակող դիմումը տվյալ ուսումնական տարվա սկզբից 5 ամիս առաջ ներկայացվում է Կենտրոն:

5.7.2 թողարկող ամբիոնի՝ Կենտրոնի տնօրենի մասնակցությամբ առաջիկա նիստում ներկայացվում է հարցը՝ քննարկելով դիմողի նախկին գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի պահպանման կամ փոփոխման հարցը: Գիտական ղեկավարի փոփոխության դեպքում դիմողը դիմումի հետ ներկայացնում է նոր գիտական ղեկավարի գրավոր համաձայնությունը ղեկավարման վերաբերյալ (Հավելված 2): Ատենախոսության թեմայի լրիվ փոփոխության դեպքում ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի հետազոտական բաղադրիչից նախկինում կուտակած կրեդիտները հաշվի չեն առնվում, իսկ մասնակի փոփոխության դեպքում Կենտրոնի և թողարկող ամբիոնի կողմից կատարվում է նախկինում կուտակած կրեդիտների վերահաշվարկ՝ համապատասխան հիմնավորմամբ:

5.7.3 Թողարկող ամբիոնի նիստից հետո եռօրյա ժամկետում ստացված համապատասխան քաղվածքը Կենտրոնի տնօրենի կողմից ներկայացվում է առաջիկա Գիտական խորհրդի նիստում, որի դրական որոշման և տվյալ մասնագիտության ուղղությամբ գիտական ղեկավար և ատենախոսության թեմա հաստատելու թույլտվություն ունենալու դեպքում հաստատվում են նոր գիտական ղեկավարը և/կամ ատենախոսության թեման: Տվյալ մասնագիտության ուղղությամբ գիտական ղեկավար և ատենախոսության թեմա հաստատելու թույլտվություն չունենալու դեպքում Համալսարանը Կենտրոնի համակարգմամբ միջնորդագիր է տրամադրում ասպիրանտին/հայցորդին, որը վերջինիս կողմից ներկայացվում է համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտական կազմակերպություն՝ եռամսյա ժամկետում հաստատման գործընթացն այնտեղ կազմակերպելու նպատակով:

5.7.4 Գիտական խորհրդում վերականգնման հարցի քննարկումից և վերականգնման կուրսի որոշումից հետո դիմողը և նրա գիտական ղեկավարը՝ Կենտրոնի և թողարկող ամբիոնի հետ համատեղ 20 աշխատանքային օրվա ընթացքում կազմում են մնացած տարիների համար ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքների անհատական նոր պլանները, որոնք Կենտրոնի տնօրենի կողմից ներկայացվում են թողարկող ամբիոնի առաջիկա նիստում:

5.7.5 Թողարկող ամբիոնի նիստից հետո եռօրյա ժամկետում ստացված համապատասխան քաղվածքը Կենտրոնի տնօրենի կողմից ներկայացվում է առաջիկա Գիտական խորհրդի նիստում, որի դրական որոշման դեպքում հաստատվում են ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքների անհատական նոր պլանները:

5.7.6 Ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքների անհատական նոր պլանների, գիտական ղեկավարի և

ատենախոսության թեմայի հաստատումից հետո ասպիրանտի/հայցորդի վերականգնումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ կնքելով համապատասխան պայմանագիր (Հավելվածներ 3,4):

5.7.7 Համալսարանի աշխատակից չհանդիսացող գիտական ղեկավարի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր (Հավելված 9):

5.8. Եթե հեռացված/ազատված/ուսումնառությունը դադարեցրած ասպիրանտը/հայցորդը ունեցել է վճարի պարտք, ապա վերականգնման ժամանակ նախքան հրամանագրումը պետք է վճարի նախկինում ունեցած պարտքն ամբողջությամբ և տվյալ շրջանի կամ ամսվա համար նախատեսված գումարը:

5.9. Հեռացված/ ազատված և վերականգնված ասպիրանտի/հայցորդի ուսման վարձը սահմանվում է տվյալ ուսումնական տարում սահմանված վարձի չափով:

5.10. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին/հայցորդին իր ցանկությամբ անվճար տրվում է Համալսարանի կողմից սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք (Հավելված 11)՝ ասպիրանտի/հայցորդի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը Համալսարանի ռեկտորին ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6.1. Գիտական ղեկավարին ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ աստիճանաշնորհման և ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգերով:

6.2. Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ:

6.3. Ասպիրանտի/հայցորդի գիտական ղեկավարի աշխատանքի վարձատրությունը Համալսարանի աշխատակից չհանդիսացող անձի համար կատարվում է ըստ կնքված աշխատանքային պայմանագրի, իսկ աշխատակից հանդիսացող անձի համար՝ ներառվում է տվյալ ուսումնական տարվա ծանրաբեռնվածության մեջ՝ 1 ասպիրանտի համար տարեկան 50 ժամ, իսկ 1 հայցորդի համար տարեկան առնվազն 30 ժամ հաշվարկով՝ պայմանավորված ուսումնառության տարիներով:

## 7. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ/ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.1. Ասպիրանտի/հայցորդի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված պրակտիկան իրականացվում է 6-շաբաթյա տևողությամբ:

7.2. Ասպիրանտը/հայցորդը և գիտական ղեկավարը ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը և վայրը, հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները, զեկուցագրով ներկայացնում են Կենտրոն՝ պրակտիկայի մեկնարկից առնվազն 1 ամիս առաջ:

7.3. Կենտրոնը պրակտիկաների ժամանակահատվածների, անցկացման վայրերի, մեթոդիստների հետ կապված հրամանի նախագիծը ներկայացնում է ռեկտորի հաստատմանը:

7.4. Պրակտիկան սկսելուց 1 շաբաթ առաջ Կենտրոնի կողմից ասպիրանտին/հայցորդին տրամադրվում են պրակտիկայի անհատական պլանի նմուշը (Հավելված 12), ասպիրանտ/հայցորդի պրակտիկայի հաշվետվության նմուշը (Հավելված 13), որոնց լրացված տարբերակները պրակտիկայի ավարտին ասպիրանտի/հայցորդի կողմից ներկայացվում են Կենտրոն՝ պրակտիկայի ղեկավարի կողմից տրված բնութագրի, պրակտիկայի անցկացման վայրից տրված բնութագրի հետ միասին:

7.5. Պրակտիկայի վերահսկողությունն իրականացվում է Կենտրոնի կողմից:

7.6. Բազմագործոնային (վերջնական) գնահատականը ձևավորվում է հետևյալ գործոնների հիման վրա.

- Մասնագիտական հմտություններ - 50%
- Գործնական հմտություններ - 20%
- Ստացված արդյունքների կիրառելիություն - 20%
- Հաճախում - 10%

7.7. Պրակտիկայի անցողիկ շեմ համարվում է 75 միավորը:

7.8. 50%-ից ավելի բացակայությունների դեպքում ասպիրանտի/հայցորդի պրակտիկան գնահատվում է «անբավարար»:

7.9. Պրակտիկային անհարգելի պատճառով չմասնակցած կամ «անբավարար» գնահատված ասպիրանտները/հայցորդները Կենտրոնի ներկայացմամբ ենթակա են հեռացման: Բացառիկ դեպքերում (առողջական խնդիրներ, հղիություն, մինչև 2 տարեկան երեխա, արտակարգ իրավիճակներ, ծառայողական հատուկ ռեժիմ) ներկայացված դիմումի, համապատասխան տեղեկանքի և/կամ կրեդիտ վճարման անդորրագրի հիման վրա ռեկտորատը կարող է թույլատրել նրանց կրկնակի պրակտիկայի անցկացումը նոր ժամանակացույցով:

7.10. Տվյալ մասնագիտության ուղղությամբ 6-ամսյա աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտն/հայցորդն իր ցանկությամբ կարող է չմասնակցել պրակտիկային, կուտակել կրեդիտները և ստանալ անցողիկ նվազագույն 75 միավոր՝ ներկայացնելով աշխատանքի վայրից համապատասխան տեղեկանք: Առավել բարձր միավոր ստանալու նպատակով ասպիրանտը/հայցորդը պետք է մասնակցի պրակտիկային՝ գործող կարգի համաձայն: Պրակտիկային մասնակցելու և 75-ից ցածր միավոր ստանալու դեպքում որպես բազմագործոնային (վերջնական) միավոր համարվում է 75 միավորը:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատման պահից և գործում է 2023-2024 ուստարվանից:

8.2. Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են Գիտական խորհրդի հաստատմամբ:

**Հավելված 1**

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի
ռեկտոր ______________________________-ին

**Դիմում**

Խնդրում եմ թույլ տալ մասնակցել 20 -20 ուսումնական տարվա ասպիրանտուրայի/ հայցորդության ընդունելությանը/ձևակերպմանը______________________________

Մասնագիտության անվանումն ու դասիչը՝ ըստ ԲԿԳԿ անվանացանկի

մասնագիտությամբ: Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը:

Հայտնում եմ համաձայնությունս առ այն, որ ինձ վերաբերելի ցանկացած պաշտոնական տեղեկատվություն (և/կամ ծանուցում) կարող եք տրամադրել ______________________ էլեկտրոնային փոստի միջոցով:

______________________________ ______________________________

Անուն, ազգանուն Ստորագրություն

«______ » ________________________ 20 թ.

**Հավելված 2**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝ ____________________________, համաձայն եմ ղեկավարել ______________________________

Գիտական ղեկավարի գիտական աստիճան, կոչում, անուն, ազգանուն, Ասպիրանտի/հայցորդի անուն, հայրանուն, ազգանուն

թեկնածուական ատենախոսությունը ____________________________________մասնագիտությամբ՝

Մասնագիտության անվանումն ու դասիչը՝ ըստ ԲԿԳԿ-ի անվանացանկի

միաժամանակ հավաստիացնելով, որ չեմ հանդիսանում 5-ից ավել ասպիրանտ/հայցորդի գիտական ղեկավար:

__________________________________ ___________________________

Անուն, ազգանուն Ստորագրություն

«______ » 20 թ.

**Հավելված 3**

ԱՍՊԻՐԱՆՏԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«      »________________ 20    թ.                                                          ք. Գյումրի

Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող

*«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ*

(Կազմակերպության անվանումը)

կազմակերպությունը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ղեկավարի (այսուհետ՝ Ռեկտոր)՝

(Անունը, հայրանունը, ազգանունը)

մի կողմից, և Ասպիրանտ՝

(Անունը, հայրանունը, ազգանունը)

մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «կողմ» և միասին՝ որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի իրավական հիմքերը**

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն որոշումը, Համալսարանի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

**2. Պայմանագրի առարկան**

Սույն պայմանագրի առարկան Համալսարանի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառության իրականացման, ինչպես նաև ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետին աշխատանքի տեղավորելու պայմաններն են:

**3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները**

3.1 Համալսարանը պարտավորվում է՝

